



**ՀԱՅԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամյո հարորդագրություն

21 հուլիսի, 2008

**ՀՄՀ-Հայաստանը պայմանագիր կնքեց
Ռոռոգման երրորդ կարգի ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկման
վերաբերյալ**

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի և «Ակադեմիկ Վ.Ի.Եդիսազարովի անվան Ջրային Հիմնահարցերի և Հիդրոտեխնիկայի Ինստիտուտ» ՓԲԸ-ի, որը հանդես է գալիս «WYG International» և «ՋԵՆ» Ֆինանսական, ճարտարագիտական և կառավարման գծով խորհրդատվական ՍՊԸ-ների հետ համատեղ, նախագծման և շինարարության վերահսկման աշխատանքների պայմանագիր կնքվեց, համաձայն որի նշված ընկերությունները ՀՄՀ-Հայաստանի Ռոռոգվող գյուղատնտեսություն ենթաձևերի շրջանակներում պետք է իրականացնեն մինչև 523 կիլոմետր ընդհանուր երկարությամբ երրորդ կարգի ջրանցքների, 20 խորքային հորերի և 55 կիլոմետր էլեկտրաէներգակիր մարտիսների վերականգնման աշխատանքների նախագծումն ու շինարարության վերահսկումը: Պայմանագիրը կնքվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակում: Այն ստորագրեցին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և «Ջրային Հիմնահարցերի և Հիդրոտեխնիկայի Ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Սարտին Հովսեփյանը:

Պայմանագիրը կնքվում է 3 տարի ժամկետով՝ 870.000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Նախագծում ընդգրկված են Հայաստանի բոլոր 10 մարզերը: Ներկայում գործող 52 Ջրօգտագործողների ընկերությունները լուրջ դերակատարություն են ունենալու նախագծի իրագործման ընթացքում՝ օգնելով գտնել այն համայնքները, որոնց երրորդ կարգի ջրանցքները իրոք վերանորոգման կարիք ունեն: Շահառու կղառնան այն համայնքները, որոնք պատրաստ կլինեն ապահովել նախագծման և շինարարական աշխատանքների իրականացման 15% համաֆինանսավորումը:

Այս պայմանագրի և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: